ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 31-24

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան

02 02 2024 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող ԺԱՆՆԱ ՁԱՔԱՐՅԱՆԻ (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «**Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս գործադիր տնօրենի լիազորություններն իրականացնող անձի՝ ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ 1162 **«Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ»** 2024 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում իրականացվող 11018 **«Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորում և զարգացում»** միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 1162 **«Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ»** ծրագրի 11018 **«Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորում և զարգացում»** միջոցառմամբ նախատեսված՝ ***173 029 200 (հարյուր յոթանասուներեք միլիոն քսաներեք հազար երկու հարյուր)*** ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ հր հայեցողությամբ սահմանելով [illegible]

վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 Հ-8 և տեքստային) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու

ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ դրամաշնորհային հաշվետվություն՝ համաձայն N 2 հավելվածի:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա դեկտեմբերի 20-ը:

2.4.9. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները (խնայողություններ), մնացորդը կազմակերպությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ արդյունքն ընդունվելուն հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 20-ը:

2.4.10. Սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ, կազմակերպությունը պետական մարմին տրամադրում է իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում, կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 10-ը ներկայացված ծախսերի կատարման հայտի (հաշվարկ-բացատրագրի) (հավելված N 7)՝ համապատասխան Ծրագրի ծախսերի նախահաշվի (հավելված N 6), և հանձնման-ընդունման (հավելված N 4) ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին:

5.2 Պայմանագրի 1.1 կետում նշված գումարից՝ մինչև 12.000.000 (տասներկու միլիոն) << դրամը, պետական մարմինը փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտերի հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի NN 1 և 5 հավելվածներում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագրի ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակով՝ 14 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն **Հասցե՝** **0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5** **Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն** **Հ/Հ 900011010460** **ՀՎՀՀ 02698604**	**«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ** **Հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի 49/3** **ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն** **Հ/Հ 900018002817** **ՀՎՀՀ 00099892**
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	**Գործադիր տնօրենի** լիազորություններն իրականացնող անձի՝
ԺԱՆՆԱ ՉԱՔԱՐՅԱՆ	ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
2024 թ 02.02-ին
կնքված N 31-24 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորում և զարգացում	Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորմանն ու զարգացմանը միտված գիտական և գիտատեխնիկական ներուժի գնահատում, առևտրայանացման ենթակա նորարարությունների և դրանց իրացման շուկաների բացահայտում, թվային հարթակի շահագործման միջոցով բոլոր շահագրգիռ կողմերին հասանելիության ապահովում	Գիտական և գիտատեխնիկական գործունեության գնահատման չափորոշիչների հարմարեցում և մշակում, ըստ տեխնոլոգիաների պատրաստվածության մակարդակների (technology readiness level)	Գիտական և գիտատեխնիկական գործունեության գնահատման չափորոշիչների առկայություն (ուղեցույց)	30.12.2024թ.	եռամսյակային, մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը	173 029,2
			Գնահատված հետազոտություններ ըստ չափորոշչի	Գնահատված հետազոտությունների քանակ	30.12.2024թ.	եռամսյակային, մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը	
			Առևտրայանացման ենթակա նորարարությունների և շուկաների թվային հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակում	Մշակված տեխնիկական առաջադրանք (ՏԱ)	30.12.2024թ.	եռամսյակային, մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը	
			Առևտրայանացման ենթակա նորարարությունների և շուկաների տվյալների բազաների ձևավորում, շահագործում	Ձևավորված տվյալների բազա (անուն տվյալ)	30.12.2024թ.	եռամսյակային, մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը	
			Փորձագիտական ծառայությունների պատվիրակում ըստ ոլորտների	Պատվիրակված ոլորտային փորձագիտական ծառայություններ (քանակ)	30.12.2024թ.	եռամսյակային, մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը	
			Գիտատեխնիկական խորհրդատվական ծառայությունների մատուցում	Խորհրդատվական ծառայություններ ստացած շահառուների թվաքանակ (համաձայն իրականացնողի կողմից մշակված գործընթացի և ԷՆ հետ համաձայնեցված շահառուների շրջանակի)	30.12.2024թ.	եռամսյակային, մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը	
			Քոուչինգի ծառայությունների իրականացում՝ առևտրայնացման ենթակա տեխնոլոգիաների տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների (feasibility study) իրականացման համար	Քոուչինգ ստացած շահառուների թվաքանակ (համաձայն իրականացնողի կողմից մշակված գործընթացի և ԷՆ հետ համաձայնեցված շահառուների շրջանակի)	30.12.2024թ.	եռամսյակային, մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը	
			Իրազեկման ծառայությունների իրականացում (սեմինարների, աշխատաժողովների կազմակերպում և անցկացում)	Իրազեկված շահառուների թվաքանակ (համաձայն իրականացնողի կողմից մշակված գործընթացի և ԷՆ հետ համաձայնեցված շահառուների շրջանակի)	30.12.2024թ.	եռամսյակային, մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը	
			Մտավոր սեփականությամբ պաշտպանված և տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ (feasibility study) անցած պատենտներ	Տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ անցած պատենտներ	30.12.2024թ.	եռամսյակային, մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը	
						ԸՆԴԱՄԵՆԸ	173 029,2

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Ս. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 90001010460
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
ԺԱՆՆԱ ՉԱՔԱՐՅԱՆ

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051 ք Երևան, Կոմիտասի 49/3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001800281 7
ՀՎՀՀ 00099892

Գործադիր տնօրենի լիազորություններն իրականացնող
ԹԱՄԱՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ

2024 թ. 02.02-ին
կնքված N 31-24 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ)

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի համար	
Դրամաշնորհատու կազմակերպություն	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

2.3 Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.4 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.5 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

Հավելված 3
2024 թ.02.02-ին
կնքված N 31-24 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ հազ. դրամ (աճողական)

Միջոցառման													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թվականին ըստ ամիսների, այդ թվում՝											
			1-ին եռ			2-ին եռ			3-ին եռ			4-ին եռ		
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
		Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորում և զարգացում	34 605,8	34 605,8	34 605,8	77 863,1	77 863,1	77 863,1	121 120,4	121 120,4	121 120,4	173,029.2	173,029.2	173,029.2

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010460
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
ԺԱՆՆԱ ՉԱՔԱՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն»
ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018002817
ՀՎՀՀ 00099892

Գործադիր տնօրենի
լիազորություններն իրականացնող՝
ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 4
2024 թ.02.02 ին
կնքված N 31-24 պայմանագրի

ՀԱՍՏԱՏԵՑ
Համակարգող փոխնախարար կամ
լիազորված անձ

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010460
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
ԺԱՆՆԱ ՉԱՔԱՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018002817
ՀՎՀՀ 00099892

Գործադիր տնօրենի լիազորություններն իրականացնող՝
ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

ԱԿՏ №

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2024 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «հունվար» 2024 թ.
Պայմանագրի համարը՝
Պետական մարմինը և Կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված № _ _ _ _ _ հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

Իրականացված միջոցառման							
		արդյունքը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը (հազ. ՀՀ դրամ)	վճարման ժամկետը (ըստ պայմանագրի)
անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց՝

ստորագրություն

անուն, ազգանուն

Ծառայությունն ընդունեց՝

ստորագրություն

անուն, ազգանուն

Հավելված 5
2024 թ. 07.04-ին
կնքված N 51-24 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐՏՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ << Էկոնոմիկայի նախարարություն

Կազմակերպության անվանումը՝ «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Ծրագրի անվանումը՝ «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ»

Ծրագրի համառոտ նկարագրություն	Միջոցառման ցուցանիշի անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ընթացքում (անոռական)			
		I եռամսյակ	II կիսամյակ	ինն ամիս	տարի
		քանակը	քանակը	քանակը	քանակը
1	2	3	4	5	6
Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորում և զարգացում	Գիտական և գիտատեխնիկական գործունեության գնահատման չափորոշիչների հարմարեցում և մշակում, ըստ տեխնոլոգիաների պատրաստվածության մակարդակների (technology readiness level)		1		1
	Գնահատված հետազոտություններ ըստ չափորոշչի		4		10
	Առնտրայանացման ենթակա նորարարությունների և շուկաների թվային հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակում		0		1
	Առնտրայանացման ենթակա նորարարությունների և շուկաների տվյալների բազաների ձևավորում, շահագործում		0		20
	Փորձնական հետազոտությունների պատվիրակում ըստ ոլորտների		2		4
	Գիտատեխնիկական խորհրդատվական ծառայությունների մատուցում		40		100
	Բուսաբուծության հատվածներում իրականացում՝ առնտրայանացման ենթակա տեխնոլոգիաների տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների (feasibility study) իրականացման հավար		5		15
	Բրոգրեսիվ ծառայությունների իրականացում (սեմինարների, աշխատաժողովների կազմակերպում և անցկացում)		70		200
	Մտավոր սեփականությունը պաշտպանված և տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ (feasibility study) անցած պատենտներ		0		1

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Ս. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
հՀ 90001001[illegible]
ՀՎՀՀ [illegible]

Գլխավոր հաշվապահի
պարտականությունը կատարող՝
[illegible]

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051, ք. Երևան, Կոմիտասի 49/3
<< Ֆինանսների նախարարություն
Գանձապետական վարչություն
հՀ 90001800257
ՀՎՀՀ 00999092
Գործառնի տարբերակների իրականացման
[illegible]

Հավելված 6

2024 թ. 02 02 -ին

կնքված N 31-24 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

NN	Ծրագրի գծով իրականացվող ծախսերը (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)	Գումարը /հազ. դրամ/2024թ.
	Անվանումները	
Ա	Բ	Գ
1	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ այդ թվում՝	127 723,3
	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	127 723,3
2	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ այդ թվում՝	15 876,1
2,1	***Շարունակական ծախսեր***	***10 809,7***
	- Էներգետիկ ծառայություններ	6 948,7
	- Կոմունալ ծառայություններ	521,0
	- Կապի ծառայություններ	1 690,0
	- Գույքի վարձակալության ծախսեր	1 650,0
2,2	***Ծառայողական գործուղումների գծով ծախսեր***	***50,0***
	- Ներքին գործուղումներ	50,0
2,3	***Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում***	***406,0***
	- Համակարգչային ծառայություններ (ՀԾ-հաշվապահ ծրագիր)	219,0
	- Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	187,0
2,4	***Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում***	***3 129,3***
	- Մասնագիտական ծառ.-ուն 1 (վերելակների սպասարկում)	129,3
	- Մասնագիտական ծառ.-ուն 2 (հաշվապահական ծառայություն)	3 000,0
2,5	***Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)***	***100,0***
	- Համակարգչային սարքավորումների ընթացիկ նորոգում	100,0
2,6	***Նյութեր (ապրանքներ)***	***400,0***
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	200,0
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	200,0
2,7	***Այլ նպաստներ բյուջեից***	***981,1***
3	ԱՅԼ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	29 429,8
3,1	***Հարկեր, պարտադիր վճարներ և տուրքեր, որոնք կառավարման***	***29 429,8***
	- Այլ հարկեր (ՀՀ պետ.բյուջեի հատկացումների գծով հաշվարկված ԱԱՀ)	28 838,2
	- Պարտադիր վճարներ	591,6
	ԸՆԴԱՄԵՆԸ	173 029,2

Պետական մարմին	Կազմակերպություն
Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ 900011010460 ՀՎՀՀ 02698604	«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ 0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900018002817 ՀՎՀՀ 00099892
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ ԺԱՆՆԱ ՁԱՔԱՐՅԱՆ Կ.Տ.	Գործադիր տնօրենի լիազորություններն իրականացնող ԹԱՄԱՐԱ ԱՎԱԳՅԱՆ Կ.Տ.

Հավելված N 7
2024 թվականի 02 02 կնքված
N 31-24 պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀԱՅՏ N

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Կազմակերպության անվանումը

900018002817
ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ

Բաժին 01 Խումբ 04 Դաս 01 Ծրագիր 01
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

2024 թ.
ԱՄՍԱԹԻՎ

«Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ»

(ծրագրի անվանումը)

Հ/Հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Առաջին կարգի
ստորագրություն՝

Երկրորդ կարգի
ստորագրություն՝

Կ. Տ.

Ծանուցում՝ Սույն հայտը ուժի մեջ է պահանջվող ֆինանսավորման, սույն պայմանագրի N2 հավելվածով հաստատված ծրագրի կատարման ծախսերի նախահաշվին համապատասխան տրված հաշվարկ-բացատրագրի առկայության դեպքում